Ստեփան Զորյան

Ջերմաչափը

Ես մի քիչ ռոմանտիկ բնաւորութիւն ունեմ: Երբ մեր տխուր, միակերպ կեանքը ձանձրացնում է ինձ, երբեմն նստում մտածում եմ անցեալի կամ հեռու ապագայի մասին, բայց աւելի յաճախ իմ մանկութեան ու դպրոցական օրերի մասին:

Այսօր էլ իմ դպրոցական օրերի վրայ մտածելով, յիշեցի մեր դպրոցի խոհարար պարոն Կարապետին, այն փոքրիկ ու վտիտ ծերունուն, որ ահագին ազդեցութիւն ունէր մեր ուսումնարանում:

Մենք՝ աշակերտներս նրան անուանում էինք «Վերմաչափ»: Այդ անունը նա ստացել էր մեր դպրոցի նախորդ սերնդից: Նրան այդպէս կոչում էին այն պատճառով, որովհետեւ նա՝ իր ֆիզիկականով պարզ որոշում էր տարւայ չորս եղանակների փոփոխութիւնը: Գուցէ շատերին տարօրինակ թւայ, թէ այդ ինչպէս կարող էր լինել: Սակայն այդպէս էր: Օրինակ, հէնց որ աշունը գար, ծառերն սկսէցին մերկանալ տերեւներից եւ մշուշը շաբաթներով ծածկէր Արարատի գագաթը, պարոն Կարապետը, ցուրտ զգալով, կը սկսէր ուսերն աստիճանաբար բարձրացնել, եւ մինչեւ ձմեռնամուտ կը հասցնէր ականջների մօտ, իսկ երբ գալիս էր իսկական ձմեռը, Արարատեան դաշտի այն կծու ձմեռը, որ եղեամը սառեցնում մարդկանց բեխերի եւ յօնքերի վրայ, տալով նրանց ծերունու դեր կատարող դերասանի կերպարանք, եւ լուսամուտների ապակիները զարդարում է բազմապիսի ծաղկանկարներով, այդ ժամանակ պարոն Կարապետի ուսերն այնքան էին բարձրանում, որ նրա փոքրիկ գլուխը թաղւում էր նրանց մէջ: Սակայն գարունը բացւելուն պէս, երբ ուռիներն սկսում էին կարմրիլ եւ սարեակների առաջին խմբերն երեւում էին բարդիների կատարին, նրա ուսերը

հետզհետէ իջնում էին նորից եւ մինչեւ ամառ բռնում իրենց կանոնաւոր դիրքը: Բայց ամառուան շոգերն սկսելուն հետ, երբ տաքացած փողոցներում զգացւում էր վառօդի հոտ, պարոն Կարապետի ուսերն սկսում էին իջնել ցած, եւ մինչեւ յուլիս նրանք այնքան իջնում, որ նրա թեւերը, սպաննուած բադի ոտների պէս, ուղիղ կախ էին ընկնում կողքերից:

Ահա՝ այս յատկութիւնների համար էլ նրան անուանում էինք «Ջերմաչափ»: Բայց, ի հարկէ մեզանից ոչ ոք չէր համարձակւում նրա երեսին տալ այդ անունը: Մենք նրան դիմում էինք ուղղակի «պարոն Կարապետ» ասելով:

Այս պարոն Կարապետը մի արագախօս ու արագաշարժ ծերունի էր՝ կարճ հասակով եւ երկար ձեռներով, որոնք մինչեւ ծնկներն էին հասնում: Ամուրի լինելով, նա դպրոցից դուրս ոչ մի հոգս ու մտածմունք չունէր: Սիրում էր շարունակ խօսել դպրոցի կարգ ու կանոնի մասին, եւ այնքան շատ էր կրկնում «կարգ ու կանոն» բառերը, որ աշակերտները նրան կպցրել էին մի երկրորդ անուն եւս «Կարգ ու կանոն»: Լինելով Վանեցի՝ անչափ սէր ունէր վիճելու . վիճում էր այնպիսի բաների մասին, որ երբեք վէճի առարկայ չէին լինում: Կը պատահէր, դիցուք, աշակերտներից մէկը կը հարցնէր, թէ ինչու նա կիրակի օրը չի գնում զբօսնելու: «Ա՛, զբօսնելո՛ւ, հեգնում էր նա, իսկ ի՞նչ օգուտ կարելի է ստանալ զբօսնելուց, ասա խնդրեմ…»: Իսկ եթէ հարցնող աշակերտը լինում էր իմ ընկեր գիշերօթիկներից, նա աւելացնում էր . «Ա՛, զբօսնելու գնամ, որ այստեղ ամէն ինչ տակն ու վրայ անէ՞ք… Չէ՛, չէք տեսնի՛…»:

Եւ իսկապէս, շաբաթներով, ամիսներով նա դուրս չէր գնում դպրոցի դարպասից, վախենալով, ինչպէս ինքն էր ասում, որ իր բացակայութիւնը կարող է խախտել դպրոցի կարգ ու կանոնը: Նրան միշտ կարելի էր տեսնել կամ խհանոցում կամ տեսչի տանը (մեր տեսուչն ապրում էր դպրոցի գաւթում) կամ թէ բակում շրջելիս, ուր վերակացուների հետ միասին հսկում էր աշակերտներին: Եւ ո՛ր աշակերտի արարքը կարող էր վրիպել նրա սուր աչքերից: «Կարգ ու կանոնով եղիր, թափ էր տալիս նա մատը այն աշակերտի վրայ, որ երգ էր ասում կամ վազում էր բակում, Կարգ ու կանոնով, հասկանո՞ւմ ես, սա դպրոց է, վարժարան, այստեղ պէտք է կարգ ու կանոնով լինել»:

«Կարգ ու կանոնը» նրա մէջ, կարծէք, դարձել էր միս ու արիւն . նոյն իսկ կերակուրների մասին խօսելիս՝ ասում էր . «Կարգ ու կանոնով կերակուրներ» . իսկ երբ իր բրդոտ կատին, որին միշտ թրջած հաց էր ուտեցնում, տեսչի տունը գնալու համար պատժում էր եւ մատը թափ տալով կրկնում . «Կարգ ու կանոնով եղիր, անպիտա՛ն, կարգ ու կանոնով: Իմացիր ո՛ւմ տունն ես գնում: Ամէն տուն չի կարելի մտնել»:

Լինելով դպրոցի խոհարարը, պարոն Կարապետը, առանց մօկի օգնութեան ինքն էր եփում բոլոր կերակուրները մեր գիշերօթիկների համար, որից օգտւում էին թէ՛ տեսուչն իր ընտանիքով եւ թէ՛ վերակացուները: «Կարգ ու կանոնով» առաջնորդուելով, նա սեղանատուն էր ուղարկում այնքան քիչ կերակուր, որ քաղցած նստում էինք սոված վեր կենում: Սրա համար երբեմն բողոքում էինք մեր վերակացուին, բայց նա միշտ ականջի տակով էր անց կացնում մեր բողոքը, որովհետեւ երեկոները, իր բացակայութեան ժամանակ, խոհարարը յաճախ փոխարինում էր իրեն: Ուստի յուսահատած դիմում էինք տեսչին . եւ երբ տեսուչը բացատրութիւն էր պահանջում խոհարարից, սա իր փոքրիկ հասակով կանգնում էր տեսչի առաջ եւ երկար ձեռները կողքից կախած՝ հասկացնում էր տեսչին, թէ դպրոցում պէտք է «կարգ ու կանոն պահպանել» . «Կարգ ու կանոնը լաւ բան է, պարոն տեսուչ . եթէ աշակերտներին շատ կերակուր տանք, նրանք ձեզ չեն լսի . փորձով գիտեմ»: Եւ, մեր ներկայութեամբ, պարոն Կարապետը սովորեցնում էր տեսչին, թէ ինչպէս պէտք է կառավարել դպրոցը, ինչպէս չպէտք է աշակերտներին երես տալ…

Պարոն Կարապետը յաճախ կատարում էր եւ վերակացուի պաշտօն: Բացի՝ բակում աշակերտներին հսկելուց, երեկոները շրջում էր գիշերօթիկներիս ննջարանի լուսամուտների տակ՝ տեսնելու՝ թէ ինչով ենք զբաղուած: Երբեմն էլ, երբ վերակացու Պ . Միքայէլը գնում էր թուղթ խաղալու (այս մենք իմացել էինք մի աշակերտից, որի քեռու հետ էր խաղում), երեկոները պարոն Կարապետն էր մտնում մեր ննջարանը, իմանալու՝ քնել ենք, վատ գրքեր հо չե՞նք կարդում կամ, վերջապէս, «կարգ ու կանոնո՞վ ենք թէ՞ ոչ: Նա մեզ մօտ գալիս էր անշշուկ, անձայն, ինչպէս դաւադիր: Ննջարանում մոռանում էր իր պաշտօնը եւ սկսում նկատողութիւններ անել, բարկանալ .

Քնեցէ՛ք, տղե՛րք, իսկո՛յն, ասում էր, եթէ արթուն էինք լինում:

Իսկ եթէ արթուն էինք լինում եւ լամպը վառ թողած՝ նա գլուխն օրօրում էր . «Ինչո՞ւ լամպը չէք քաշում . սա ի՞նչ կարգ ու կանոն է, ա՛յ-ա՛յ-ա՛յ»: Եթէ մէկիս վերմակը ծռած էր լինում, նա բոլորովին վերցնում էր այն ու նորից խնամքով ծածկում, կարծելով թէ դա շա՛տ հաճելի է մեզ, եւ զարմանում էր, որ շնորհակալ չենք լինում:

Ընդհակառակը, մենք բոլորս ատում էինք նրան: Ատում էինք եւ վախենում միաժամանակ: Եւ ոչ միայն մենք՝ գիշերօթիկներս, դպրոցում ամէնքը (բացի տեսչից, որի տանը ձրի ծառայում էր նա) ատում էին նրան եւ վախենում միաժամանակ: Ուսուցիչները նրա հետ չէին խօսում, վերակացուները խուսափում էին նրանից: Պատմում էին, թէ նա տեղեկութիւններ է հաւաքում ուսուցիչների վարած կեանքի մասին եւ նրանց գաղտնիքները հաղորդում տեսչին: Պատմում էին նաեւ, որ տեսուչը նրա խորհուրդով է վարւում Թէ որքան ճիշդ էր այդ բոլորը դժւար է ասել:

Բայց ամենից շատ նրան ատում էինք մենք՝ գիշերօթիկներս, սակայն վախից չէինք կարողանում արտայայտել եւ բաւականանում էինք միայն նրանով, որ խոհանոցի մրոտած պատերին կամ օճախի չուգունի երեսին գրում էինք կաւճով . «չափ-չափ չափ-ջերմաչափ»:

Մեր այս արարքը, հարկաւ, անպատիժ չէր մնում: Խոհարարը սաստիկ բարկանալով՝ ամենից առաջ պակոեցնում էր կերակուրները, յետոյ զեկուցում էր տեսչին անկարգ աշակերտների մասին եւ սաստկացնում գիշերային հսկողութիւնը ննջարանի լուսամուտների տակ, որտեղից երբեմն երեւում էին նրա պրպտող աչքերը, որոնք յիշեցնում էին պատի ճեղքերից նայող մկներին, որ այնքան զգուշ են լինում եւ այնպէս ուզում են ամէն ինչ տեսնել:

Մի անգամ, սակայն, նրա հսկողութիւնը սաստիկ վրդովեց գիշերօթիկներիս:

Մի երեկոյ, երբ վերակացու պ . Միքայէլը դարձեալ գնացել էր թուղթ խաղալու, պարոն Կարապետը, ինչպէս միշտ, անձայն անշշուկ մտաւ ննջարան: Բոլորս պառկած՝ լսում էինք մեր ընկեր Աբելեանի ընթերցումը: Նա կարդում էր Զօլայի

վէպերից մէկը: Դռան բացելու ձայնը լսելուն պէս նա գիրքը դրեց բարձի տակ ու վերմակը քաշեց գլխին: Պարոն Կարապետը ոտների ծայրերի վրայ, աչքերը պրպտելով անցաւ մահճակալների արանքով, կանգ առաւ աշակերտ Աբելեանի մահճակալի մօտ: Մենք ձեւացրինք թէ քնած ենք: Նա մի րոպէի չափ նայեց Աբելեանին եւ ապա, աւելի մօտենալով, նրա բարձի տակից հանեց Զօլայի գիրքը եւ բացագանչեց .

Ա՛հ, դուք այստեղ յեղափոխական գիրքեր էք կարդո՞ւմ:

Աբելեանը վեր թռաւ տեղից:

Դա յեղափոխական գիրք չէ, պարոն Կարապետ, ասաց նա յուզուած եւ փորձեց գիրքը խլել խոհարարի ձեռից:

Բայց խոհարարը, պահպանիչ ասող քահանայի նման, գիրքը ձեռով բարձրացրեց գլխից վերեւ:

Լա՛ւ կարգ ու կանոն է, շարունակեց նա, էլ ի՛նչ ասել կ'ուզի… ի՞նչ է, դուք ուզում էք այստեղ յեղափոխութի՞ւն սարքել… Լա՛ւ, շա՛տ լաւ…

Դա յեղափոխական գիրք չի, պ . Կարապետ, ձայն տուին աշակերտներն իրենց անկողիններից:

Հապա՛, հապա ի՛նչ զահրումար է, որ յեղափոխական չի: Մի՞թէ չե՛մ տեսնում ինչ տեսակ կազմ ունի:

Սա Զօլայի գիրքն է, պարոն Կարապետ, Զօլայի, կրկնում էր Աբելեանը եւ նորից փորձում գիրքը խլել:

Ա՜հ, Զօլայի՜, չարախնդաց խոհարարը, գիրքն աւելի բարձրացնելով: Գիտե՛մ, գիտե՛մ ո՛վ է այդ Զօլան . նա Ինքն ամենամեծ յեղափոխականն է . ամենամեծ սրիկան: Ճանաչում եմ ձեր այդ Զօլային, ճանաչո՛ւմ եմ… Բանտը քիչ է նրան…

Զօլան գրող է, պարոն Կարապետ, ասում էր Աբելեանը եւ գիշերային շապիկով պտտումն խոհարարի շուրջը: Գրող է, յեղափոխական չի…

Նոյնը կրկնում էին եւ աշակերտներն իրենց մահճակալներից, բայց պարոն Կարապետը քմծիծաղ էր տալիս միայն:

Գիտե՞մ ի՛նչ գրող է, գիտե՞մ…

Կարճ միջոցում աշակերտները՝ գիշերային շորերով՝ շրջապատեցին խոհարարին եւ աշխատեցին գիրքը խլել նրա ձեռից: Որքան շատ էին հոգ տանում գրքի մասին, այնքան աւելի պարոն Կարապետը կասկածում էր, որ գիրքն անպատճառ յեղափոխական է, ուստի եւ աւելի էր բարձրացնում այն: Մէկ էլ, յանկարծ՝ մի զարմանալի ճարպիկութեամբ գիրքը կոխեց ծոցը եւ ձեռները կրծքին դնելով, գոռաց .

Տեղերնի՛դ, անպիտաններ: Կարգ ու կանոնով եղէք…

Տեսչի երկիւղից եւ սքանդալից խուսափելու համար քաշուեցինք տեղերս, իսկ պարոն Կարապետն իր աւարով յաղթական, արագ-արագ գնաց դէպի դուռը: Շէմքի մօտ՝ նա երեսը շրջեց դէպի մեզ եւ սպառնաց մատը թափ տալով .

Սպասեցէ՛ք, ըմբոստներ, սպասեցէ՛ք, ցոյց կուտամ ձեզ կարգ ու կանոնը…

Ու դուռն ամուր շրխկացնելով՝ անհետացաւ:

Լուսամուտներից նկատեցինք, որ գնաց տեսչի տուն:

Տեսչի առանձնասենեակում լոյս էր վառում:

Ո՞հ, ինչ օր էր այդ: Մեր ննջարանից քանի՞-քանի՞ գլուխներ ու բռունցքներ էին թափահարւում նրա յետեւից եւ ատամներ կրճտում անզօրութիւնից:

Ինչպէս եւ սպասում էինք, հետեւեալ օրը մեր ճաշկ աւելի պակասեց, իսկ տեսուչը խիստ նկատողութիւն արաւ մեզ . ի՛նչ բան է, աշակերտ մարդիկ, փոխանակ դաս սովորելու, սիրային վէպեր էք կարդում, խոհարարին ծեծում ննջարանում եւ դուրս գցում:

Մի՞թէ չէք ամաչում, աւարտեց տեսուչն իր ճառը, բարկացած աչքերը յառելով մեզ վրայ:

Ի՛ զուր աշխատեցինք պաշտպանել . ի զո՛ւր փորձեցինք համոզել, թէ խոհարարին չենք ծեծել . մեզ ոչ ոք չէր լսում, մեզ ոչ ոք չէր հաւատում:

Դէպքն այնպէս վրդովեց գիշերօթիկներիս, որ սկսեցինք հնար մտածել խոհարարից վրէժ առնելու:

Ինչե՛ր ասէք չի հնարում վիրաւորուած դպրոցականի գլուխը, մանաւան զաւառում: Է՛լ աղէտ, է՛լ հիւանդութիւն չմնաց, որ չցանկայինք մեր խոհարարին: Աբելեանը, որ ամենից տուժողն էր, առաջարկում էր, սպաննել խոհարարի սիրելի կատուին, մի ուրիշ աշակերտ խորհուրդ էր տալիս գողանալ խոհարարի գլխարկն ու կօշիկները եւ գցել մի փոսի մէջ: Այսպէս՝ ամէն մէկը մի բան էր ասում, երբ, վերջապէս, չորրորդ դասարանի մի աշակերտ առաջարկեց՝ խոհարարին տեսչի աչքում վարկաբեկելու համար, թագուն աղ լցնել կերակուրների մէջ:

Առաջարկը բոլորիս դիւր եկաւ: Աշակերտները հորթի պէս ուրախացան: Վերջապէս գտնուեց մի միջոց անպիտան խոհարարին պատժելու, մտածում էր ամէն մէկն այդ րոպէին: Բայց ո՞վ կը կատարի այդ յանդուգն քայլը:

Ես, բացագանչեց Աբելեանը կամրած, ես կ’անեմ… Այդ բանը թողէք ինձ…

Ժամանակը ձմեռ էր . լուսամուտների ապակիները սառոյց էին բռնել . եղեամը սառչում էր մարդկանց դէմքի մազերի վրայ եւ բրդէ թելի կտորների նման խաղում օդի մէջ: Պարոն Կարապետի գլուխն արդէն թաղուել էր ուսերի արանքում: Մի ամբողջ շաբաթ դպրոցը պատրաստւում էր Վարդանանց տօնի օրը հանդէս կատարելու, որին հրաւիրուած էին եպիսկոպոսը, քաղաքագլուխը եւ մի բանաստեղծ, որ մի ոտանաւոր էր նուիրել մեր դպրոցին: Աբելեանը հանդէսի պատրաստութեան չէր մասնակցում . նա վերարկուի օձիքն ականջներին քաշած, ազատ ժամանակը շարունակ պտտւում էր խոհանոցի մօտերքը, կարծես ուսումնասիրում էր մուտքը, յարմարութիւնները, բայց խոհանոց չէր մտնում, որովհետեւ պարոն Կարապետը, ցրտի պատճառով, խոհանոցից չէր հեռանում…

Վերջապէս եկաւ հանդէսի օրը: Խոհարարն առաւօտից մեծ պատրաստութեան մէջ էր, որովհետեւ հանդէսից յետոյ լինելու էր ճաշկերոյթ: Եկել էին բոլոր հրաւիրուած մարդիկ . քաղաքագլուխը, բանաստեղծը, եպիսկոպոսը եւ երկու վարդապետ, որոնք իրար այնպէս էին նման՝ ինչպէս երկւորեակներ:

Դպրոցի բեմը զարդարուած էր գորգերով եւ գոյնգոյն թղթերով: Տեսչի ճառից յետոյ՝ խօսեց եւ եպիսկոպոսը «մեր փառաւոր նախորդաց» մասին եւ էլի մի երկու հոգի: Ապա սկսուեց երգն ու արտասանութիւնը:

Հանդէսը վերջանալու վրայ էր, երբ դահլիճ մտաւ եւ պ . Կարապետը . նա հագել էր իր տօնօրեայ զգեստը սեւ երկար կապան, իսկ վզին փաթաթել էր մի կարմիր թաշկինակ: Դահլիճի տաքութեան շնորհիւ նա ուսերն իջեցրել էր մի փոքր եւ սաստող հայեցքով նայում էր աշակերտներին . կարծես ուզում էր ասել . «Կարգ ու կանոնով եղէք, անպիտաննե՛ր, հիւրեր կան այստեղ»:

Նրան երեւալուն պէս՝ Աբելեանը չքացաւ յանկարծ եւ մի քանի րոպէից նորից յայտնուեց այլայլուած ու կարմրած այտերով:

Հանդէսից յետոյ սկսուեց ճաշը: Թէ հիւրերը, թէ ուսուցիչները եւ թէ աշակերտները մի սեղանատան էին: Գլխաւոր սեղանի գլխին տեղ էր բռնել եպիսկոպոսն իր թիաձեւ միրուքով . նրա աջ եւ ձախ կողքերին՝ վարդապետները, յետոյ քաղաքագլուխը՝ իր դեղին շղթան վզին, տեսուչը, բանաստեղծը եւ ուսուցիչները կարգով: Մեր՝ աշակերտներուս սեղանները առանձին էին, բայց, չնայած դրան, մենք ուշադրութեամբ հետեւում էինք մեծերի զրոյցին: Մինչեւ կերակուրի բերելը սրբազանը պատմում էր սեղանակիցներին, թէ ինչպէս մի անգամ, մանուկ ժամանակ, ձին քացի է տուել իրեն եւ ինչպէս ինքն ուշաթափուել է հարուածից… Սեղանակիցները մեծ ուշադրութեամբ հետեւում էին սրբազանի զրոյցին եւ ոչ ոք չէր համարձակւում որ եւ է խօսքով ընդհատել նրան: Երբ սպասաւորները կերակուրը բերին խօսակցութիւնն իսկոյն դադարեց: Հայր սրբազանն սկսեց միրուքը շփելով սեղանն որինել: Ոչ ոք կերակուրին չմօտեցաւ, մինչեւ որ եպիսկոպոսն ինքը չճաշակեց ամենից առաջ: Եւ քանի որ մեր կերակուրը չէին բերել, մենք շարունակ յօնքի տակով՝ հետաքրքիր նայում էինք հիւրերի կողմը: Ամենից շատ մեզ գրաւում էր բանաստեղծն իր երկար մազերով… Երբ սրբազանն արծաթէ գդալով կերակուրը տարաւ բերանը, նա դէմքը խոժոռեց՝

փոշտալ պատրաստողի նման: Եւ զարմանք բան . նոյնպէս՝ առաջին գդալից յետոյ դէմքերը խոժոռեցին եւ՛ վարդապետները, ե՛ւ քաղաքագլուխը, եւ բանաստեղծն ու ուսուցիչները, իսկ տեսուչը՝ գունատուեց . գունաթափուեցին եւ մի քանի ուսուցիչներ: Բայց ոչ ոք ոչինչ չէր խօսում: Եւ առաջինը դարձեալ եպիսկոպոսը եղաւ, որ խզեց լռութիւնը:

Ինչպէս երեւում է, ասաց նա ծանր ու միրուքը շփելով, ձեր խոհարարը մի քիչ այնպէս… աղը շատ է արել…

Այո, գլխով արին վարդապետները: Մի քիչ այնպէս…

Բանաստեղծն ու քաղաքագլուխը լուռ մնացին:

Այս անգամ տեսուչն աւելի գունատուեց: Այդ րոպէին նա յիշեցնում էր քննութիւն տուող աշակերտի, որ տրուած հարցերին չի կարողանում պատասխանել: Ուսուցիչները լուռ նայում էին նրան, իսկ նա մեղաւոր հայեացքով նայում էր հիւրերին եւ կարծես ուզում էր ասել «Ներեցէք»… Խե՜ղճ տեսուչ… Այդ միջոցին որքան ողորմելի էիր դու քո անունով, քո ակնոցներով եւ սեպաձեւ միրուքով:

Անյարմար լռութիւնը խզեց դարձեալ եպիսկոպոսը .

Ոչինչ, ոչինչ, թողէք միւս կերակուրներից բերեն…

Ճաշն անցաւ լուռ . հանդէսի բարձր տրամադրութիւնը բոլորովին ընկաւ: Ամէնքն էլ աշխատում էին ցոյց տալ, որ պատահածը ոչինչ բան է, բայց, նրանց շարժ ու ձեւերը, հայեացքը մատնում էին նրանց:

Ամենից անհանգիստ էր տեսուչը . նա շարունակ կրծում էր վարի շրթունքը: Դա արդէն ապացոյց էր, որ սաստիկ բարկացած է:

Աբելեանը հասել էր իր նպատակին, որի տխուր հետեւանքն, հարկաւ, չէր նախատեսել:

Հենց միւս օրը խոհարարն արձակուեց պաշտօնից:

Որքան էլ նա աշխատում էր համոզել տեսչին, վերակացուներին, թէ անմեղ է, բայց հիմա էլ նրան չէին հաւատում…

Երբ նա, իրերը հաւաքած, կատուն գրկած, անցնում էր դպրոցի բակով, լալիս էր: Սակայն, աշակերտներից եւ ոչ մէկը չզգացեց նրա արցունքներից:

Կ'երթամ, ասաց նա դարպասի մօտ երեսը դէպի դպրոցը դարձնելով, կ'երթա՛մ ուրիշ տեղ խոհարար կը լինեմ, բայց վախենում եմ, որ այս կարգ ու կանոնը խախտի այս դպրոցում…

Ու գնաց ծերը, փոքրիկ գլուխն ուսերի մէջ խրած:

Նրա գնալուց յետոյ, դպրոցի «կարգ ու կանոնը» խախտեց նրանով, որ փոքրիկ աշակերտներն ազատ շրջում էին բակում, ծիծաղում էին առանց վախի, իսկ մենք՝ գիշերօթիկներս, երբեմն երգ էինք ասում մեր տխուր ննջարանում:

Խե՛ղճ՝ «Ձերմաչափ»… Արդեօք ո՞րտեղ ես հիմա:

Ես այժմ պատրաստ եմ ամէն ինչ ներել քեզ…

«Ձմրան գիշեր» հատորէն, գրուած 1916ին